

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	7
1.3. Ջրահեռացման համակարգ .....	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	9
1.5. Էներգահամակարգ .....	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	10
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>11</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	12
2.2. Հասույթ .....	12
2.3. Գանձում .....	13
2.4. Դեֆիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ .....	14
2.5. Ջրաչափեր .....	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	16
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>17</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	22
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	25
3.6. 1-85 թեժ գիծ .....	27
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>28</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>31</b>
5.1. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....	32
5.2. Դասընթացներ/սեմինարներ .....	32
5.3. Բուժզննում .....	33
5.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	33
5.5. Փորձաքննություններ .....	34
<b>6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>35</b>
6.1. Ինտերակտիվ համակարգ .....	36

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան

● Տիգրան Մեծի պողոտա 29 շենքը սնուցող  $D=50$ մ պողպատե ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում, հաճախակի էին կրկնվող վթարները: Խնդրի կարգավորման համար «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է  $D=63$ մ  $L=70$ զծ/մ պոլիէթիլենային խողովակի տեղադրում: Արդյունքում շահագործումից հանվել է  $D=50$ մ քայքայված պողպատե ջրագիծը:

● Նորքի 7փողոցում գոյություն ունեցող  $D=50$ մ  $L=190$ զծ/մ թուջե հին ջրագիծը գտնվում էր մաշված և վթարված վիճակում: Ջրագիծը շահագործումից հանելու նպատակով «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է  $D=63$ մ  $L=190$ զծ/մ պոլիէթիլենային նոր ջրագիծ: Իրականացված աշխատանքների արդյունքում վերացել են նշված հատվածում ջրագծի մաշվածության պատճառով առաջացող վթարները և թվով 6 բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը իրականացվում է նոր գրագծով:



### Մարզ Արարատ

● Համայնք Դեղձուտ, Կամո փողոցի  $d=50$ մ- $76$ մ մետաղական ջրագծերը կառուցվել էին 1960-ական թվականներին և գտնվում էին քայքայված վիճակում, ինչի հետևանքով առկա էր ջրակորուստ: Վթարային վիճակը վերացնելու և ջրամատակարարման որակը բարձրացնելու նպատակով «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից  $L=570$ զծ/մ երկարությամբ վթարային ջրագիծը փոխարինվել է նոր  $d=90$ մ և  $d=63$ մ պոլիէթիլենային խողովակներով, իրականացվել է թվով 24 բնակիչ-բաժանորդի անհատական միացումներ  $d=20$ մ  $L=110$ զծ/մ ընդհանուր երկարությամբ, տեղադրվել են ջրաչափական դիտահորեր:

Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $d=50$ մ- $76$ մ  $L=570$ զծ/մ երկարությամբ քայքայված ջրագիծը, տնտեսվել է  $Q=4$ լ/վրկ ջրաքանակ:



### Մարզ Գեղարքունիք, Մարտունի տեղամաս

#### Համայնք Ն. Գետաշեն

● Ներքին Դուրան թաղամասի 3-րդ փողոցի ջրամատակարարուժն իրականացվում էր 1960-70 ական թվականներին կառուցված  $d=100$ մ- $150$ մ տրամաչափի պողպատե ջրագծերով, որոնք տարիների ընթացքում քայքայվել էին և առկա էին բազմաթիվ վթարներ: Վթարային վիճակում գտնվող ջրագիծը անցնում էր բաժանորդների բակերի և հողամասերի միջով, ինչը խոչընդոտում էր վթարների վերացման աշխատանքներին և հնարավորություն չէր տալիս բարելավել թաղամասի ջրամատակարարումը: «Մարտունի» տեղամասի աշխատակիցների կողմից նոր հետագծով կառուցվել է  $d=160$ մ  $L=1200$ զծ/մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ, իրականացվել են անհատական միացումներ նոր պոլիէթիլենային խողովակներով, սահմանազատման կետում տեղադրվել է թվով 50 ջրաչափական դիտահոր և փոխարինվել և տեղադրվել են ջրաչափական սարքերը:



Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $d=100$ մմ-150մմ քայքայված պողպատե ջրագիծը, տնտեսվել է մոտ 8լ/վրկ ջրաքանակ, բարելավվել է թաղամասի ջրամատակարարումը:



### Մարզ Վայոց Ձոր

● Համայնք Գլաձոր, 18-րդ փողոցում «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է  $d=63$ մմ  $L=200$ գծ/մ երկարությամբ նոր պոլիէթիլենայի ջրագիծ: Նոր կառուցված ջրագծից իրականացվել են թվով 19 անհատական միացումներ, սահմանազատման կետում տեղադրվել է թվով 19 ջրաչափական դիտահոր և փոխարինվել և տեղադրվել են ջրաչափական սարքերը: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $d=50$ մմ քայքայված պողպատե ջրագիծը, բարելավվել է փողոցի ջրամատակարարումը և ջրի որակը, տնտեսվել է մոտ 1,5լ/վրկ ջրաքանակ:



Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1476
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	48981
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	44825
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	8686
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	75
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1127.5
Կառուցված ջրագիծ	մ	6355
Կառուցված կոյուղագիծ	մ	195.9
Վերացված գաղտնի վթարներ	հատ	29
Փոխարինված փական	հատ	48
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	547
Մաքրված դիտահոր	հատ	553
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	37.4
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1417
Ջրահեռացման ցանցում	հատ	2571
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	474

Դեկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	826	1070	625

## 1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է դեկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	195	5	0	0	1	1	0	0	0	202
Փոխարինված	362	11	0	1	1	6	1	2	0	384
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	299	20	3	4	5	6	1	0	2	340
Ընդամենը	856	36	3	5	7	13	2	2	2	926

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 926 ջրաչափ: Կատարված աշխատանքների 92 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	2230	340	18
2	Սաշոոց	1610	254	66
3	Շահումյան	1130	214	0
4	Զեյթուն	680	278	0
5	Շիրակ	570	496	3
6	Արթիկ	0	95	9
7	Ապարան	0	32	0
8	Ալավերդի	2550	14	0
9	Աշոցք	168	14	0
10	Բերդ	120	10	0
11	Իջևան	360	52	6
12	Լոռի	3240	201	6
13	Նոյեմբերյան	0	16	0
14	Սպիտակ	100	11	0
15	Ստեփանավան	0	31	0
16	Թալին	0	17	0
17	Տաշիր	230	8	0
18	Չարենցավան	520	96	0
19	Աբովյան	1870	60	12
20	Հրազդան	850	107	0
21	Կենտրոն	600	262	18
22	Հյուսիս	3285	240	4
23	Հարավ	1130	402	12
24	Էրեբունի	520	179	0
25	Արմավիր	10414	155	0
26	Էջմիածին	0	143	0
27	Աշտարակ	0	18	0
28	Արտաշատ	2080	92	0
29	Արարատ	1365	103	17
30	Մասիս	2124	103	28
31	Գավառ	230	19	0
32	Սևան	1920	65	1,9
33	Մարտունի	60	22	0
34	Վարդենիս	320	14	0
35	Ճամբարակ	0	14	0
36	Դիլիջան	50	39	24
37	Վայք	755	17	0
38	Եղեգնաձոր	140	16	6
39	Զերմուկ	0	33	0
40	Սիսիան	0	42	0
41	Գորիս	150	50	0
42	Կապան	0	80	0
43	Մեղրի	0	37	0
	Ընդամենը	41371	4491	229



## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. Սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի պոմպի բանվորական անիվը խցանվել էր և ջուր չէր մղում: Արդյունքում պոմպը դուրս բերվեց հորից և մաքրվեց: Խցանվել էին նաև հակադարձ փականները որոնք ևս մաքրվեցին: Թողարկիչներին միացվող մալուխները շատ էին տաքանում և այդ թերությունը շտկելու համար մալուխների ծայրերին տեղադրվեցին ծայրակալներ:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում ճաղավանդակի քերիչ սանրերը պտտեցնող շղթան կտրվել էր, որի պատճառով ճաղավանդակը խցանվել էր: Արդյունքում ճաղավանդակը դուրս բերվեց հորից մաքրվեց և վերանորոգվեց կտրված շղթան: Այժմ ճաղավանդակն աշխատում է բնականոն ընթացքով:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում մանր ճաղավանդակի քերիչ սանրը տեղից խախտվել էր, որի պատճառով խցանվել էին ճաղավանդակի անցքերը: Արդյունքում քերիչ սանրը կարգաբերվեց և այժմ ճաղավանդակն աշխատում է բնականոն ընթացքով: Փոխարինվեցին նաև օդամուղի ածուխները և ֆիլտրերը:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՂ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	66,539	28.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	65,528	10.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	171,156	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	73,622	5.4
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	120,453	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	14,752	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	9,195	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,400	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	27,300	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	86
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	21
Այց	1
Պոմպի ապամոնտաժում	1

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար դեկտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել է թվով 6 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 2 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուումի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաառնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 102 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

Թվով 87 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 7 մեքենա-մեխանիզմների համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 6 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուխ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 6 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 4 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 9 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 3 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.01.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 568,359 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. դեկտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	669,701	543,150	81,1
	Իրավաբանական անձ	30,215	25,209	83,4

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	731,801	590,614	80,7
	Իրավաբանական անձ	35,476	24,884	70,1

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայքեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 1072 նոր բաժանորդ:


## 2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով: Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը: Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4609 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 11.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2423	1702	295	4420
	Իրավաբանական անձ	96	82	11	189
	Ընդամենը	2519	1784	306	4609



Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ դեկտեմբեր ամսին փոխարինված 4609 ջրաչափերի մոտ 45%-ը (կամ 2090 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 134,140 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Դեկտեմբեր ամսին գանձումը կազմել է 2,083 մլն դրամ (110 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի

շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսագանգեր և այլն: Մակայն, հաշվի առնելով աշխարհում այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը դեկտեմբեր ամսին գերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կիրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Դեկտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 342 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 31,3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10285	1149880773	6929	6690220646	158	20991281	3212	468612930	4038	405334090

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.01.2022թ. դրությամբ (մլն.ՀՀ դրամ)	Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,198	1,862
Բնակիչ-բաժանորդներ	6,083	1,241
Իրավաբանական անձեր	2,115	621

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 300.8 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2021 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.01.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	699,099	589,060	84.26	34,367	24,876	72.38
	Առանց ջրաչափի	32,702	1,554	4.75	1,109	8	0.72

Տվյալների բազայում 01.01.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	870,826	392,003	45.02	38,207	10,545	27.60

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 5599 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1599 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2366	1939	81.9
գ.Պոռշյան	1598	1069	66.5
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5902	1853	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 10417, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 9961, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1496, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2193, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1406, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2146 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4028 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Բնտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	358	178,280	29,612,108

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի դեկտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.5%, ինչը 0.1% պակաս է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 56 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գաննի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2021թ-ի դեկտեմբեր ամսին, 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 244 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը ավելացել է 42 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի ծախսն Երևան քաղաքում նվազել է 2 052 ԿՎտ/ժ. (0.39%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:


Երևան քաղաքի բակային պոմպեր



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ այս տարի նոր պոմպակայանների թիվն ավելացել է 7-ով, իսկ էլ. էներգիայի ծախսը՝ 7091 կՎտ:


Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների էլ. էներգիայի ծախսը նվազել է 1441.45 կՎտ/ժամ 6%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



Գյումրի քաղաքում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 5425 կՎտ/ժամ 16%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:



**Ուսումնասիրված հասցեներ**

- ▶ ՀՀաշվետու ժամանակահատվածում կատարվել է թվով 70 հասցեների էլ. հաշվիչների գույքագրում և ընթերցում: Մեկ հասցեում կատարվել է մոնտաժային աշխատանք:
- ▶ Արարատի ՕԿՁ- հոսանքի տրանսֆորմատորի փոխարինում:
- ▶ Թվով 17 հասցեներում կատարվել է հոսանքի պարամետրերի ստուգում, պոմպակայանի զննում, թերությունների հայտնաբերում:

**Պոմպակայանների ուսումնասիրություն**

42 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 34 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները: Թվով 418 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 321 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

**Ինվերտորների տեղադրում**

● Թվով հինգ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:

**Ինվերտորային պոմպի տեղադրում**


● Երկու հասցեում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր:

**Լուսվորության մոնտաժում**

● Թվով 13 հասցեում վերականգնվել է տարածքի լուսավորությունը, մոնտաժվել են նոր լուսարձակներ:

Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլեկտրաէներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 8,35 կՎտ.ժ կամ 10.19%:

**Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա**




**Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ**

● Հաշվետու ժամանակահատվածում 21 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:

Դեկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 45,372 ԿՎտ/ժամ (5.67%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


**Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա**





● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 189,486 ԿՎտ.ժ/ ամիս կամ 9,42 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 5705 ԿՎտ.ժ կամ 0,14 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

*«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա*



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են դեկտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

<i>Աշխատանքի անվանում</i>	<i>Չ/Մ</i>	<i>Քանակ</i>
Գավառ քաղաքի կոյուղագծերի թվայնացում	կմ	30.430635
Մարզային կոյուղու երկարությունը փոփոխված տարբերակով	կմ	1470.52
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	76
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1762.06
Համայնքների ջրամատակարարման ցանցի տվյալների միավորում և մուտքագրում	հատ	34
Գեղարքունիք մարզի Գագարին գյուղի թվայնացումը	գյուղ	1
Գյումրի քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի, ջրատարների տվյալների, ՕԿՁ-ների երկու առկա բազանների միավորում մեկ ընդհանուրի մեջ	բազա	1
Ջրային կոմիտեին Վանաձորի և Գյումրի քաղաքների ԱՏՀ տվյալների տեղեկատվական բազայի հանձնում	բազա	2
Հիդրավիկական մոդելների ստեղծում ԱՏՀ բազայի հիման վրա համայնքների համար	համայնք	28
Իրավաբանական բաժնորդների կետերի ուղղում	կետեր	111
Ֆիզիկական բաժնորդների կետերի ուղղում	կետեր	1557
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	179
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	37
Կենտրոն տեղամասի վճարների քարտեզագրում և ԱՏՀ տվյալների բազայում մուտքագրում	վճար	101
Նովոսելցովո, Գետավան, Կոզղաշեն, Արտամետ պոմպակայանների ակտիվների գնահատում և տվյալների մուտքագրում թվային փոխարկով	պոմպակայան	3
Համայնքների թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում, տարածական տվյալների կոնվերտացիա AutoCAD համակարգից դեպի ArcGIS	համայնք	35
Մասիս քաղաքի ջրային ցանցի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	քաղաք	1

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### Արարատյան ջրատար

Կատարվել է շրջայց Արարատյան 3-4 հերթերի հորերում: Բացահայտվել է մի շարք արտահոսքերի պատճառը, որը հիմնականում պայմանավորված էր անսարք փականներով: Իսկ 3-րդ հերթի թիվ 19 հորի փականը ապամոնտաժվել է: Հորը ժամանակին հանձնվել էր Բնապահպանության նախարարությանը՝ կոնսերվացնելու նպատակով: Շրջայցի ընթացքում ապօրիություններ չեն հայտնաբերվել:



#### Կաթնաղբյուր 3

Օգտվելով ջրատարի կանգառից՝ վերանորոգվել են Զեյթուն ՕԿՁ-ում գոյություն ունեցող D=400մմ 2 հատ հեռակառավարվող փականները:

#### Գառնի ջրատար

Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել են 3 վթարներ, որոնցից երկուսը վերացվել են «Էրեբունի» ՇՏ-ի ուժերով: Երրորդ վթարը վերացնելու համար անհրաժեշտ կլինի կազմակերպել ջրատարի կանգառ՝ ճնշման բարձր լինելու պատճառով: Առաջին երկու վթարները վերացնելու արդյունքում ջրաքանակն ավելացել է 10լ/վ-ով:



#### Գառնի-Երասխա ջրատար

Ջրատարից դեպի Արարատի ցեմենտի գործարան մղող, նոր կառուցված պ/կ-ի մղման խողովակաշարի վրա հայտնաբերվել է վթար՝ 5լ/վ: Այն վերացվել է գործարանի կողմից:



#### Քանաքեռ-Արզական ջրատար

Ջրատարից դեպի Պտղնի գյուղի միացում առաջացել էր վթար՝ 10լ/վ-ով: Տեղում շինարարություն իրականացնող ընկերության ուժերով ջրագիծը շրջանցվել է, և վթարված հատվածը դուրս է եկել շահագործումից:

Ընթացիկ ամսում կատարվել են շրջայցեր տարբեր ջրատարների վրա, որոնց ընթացքում հայտնաբերվել են մանր վթարներ: Այդ մասին տեղեկացվել է շահագործման տեղամասերին:



## Գոտիավորման աշխատանքներ

### Գյուղ Նոր Ախուրյան

Շիրակ տեղամասի սպասարկյալ տարածքում գտնվող Նոր Ախուրյան համայնքում կատարված վթարադիագնոզիկական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար  $D=100$ մ պողպատե ջրագծի վրա: Նշված ջրագիծը քայքայված էր և սնուցում էր ընդամենը մեկ բնակելի շենք, ուստի այն որոշվել է ներանցման փոփոխություններով  $D=32$ մ ՊԷ ջրագծով: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է  $D=100$ մ  $L=55$ մ պողպատե ջրագիծ, ներանցում է կատարվել  $D=32$ մ ՊԷ  $L=55$ մ ջրագծով: Տնտեսվել է  $Q \approx 4-5$  լ/վ ջրաքանակ:




### Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի հետ համատեղ ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Իսահակյան 3 շենքի բակում տեղի ունեցած վթարի վայրում, որի ջուրը լցվում էր հարակից ավտոտնակի մեջ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վթարվել էր նշված շենքի բակում նախկինում գոյություն ունեցած, այժմ քանդված վիճակում գտնվող հին կաթսայատունը սնուցող ջրագիծը: Միացման կետում հայտնաբերվել է հողի տակ կորած դիտահորը: Փականով և խցափակման եղանակով շահագործումից հանվեց  $D=80$ մ  $L=115$ մ պողպատե ջրագիծը: Տնտեսվել է մոտ 1-2 լ/վ ջրաքանակ:



### Քաղաք Իջևան

● Փոխարինվել է Իջևան քաղաքի Երևանյան փողոցով անցնող, հաճախակի վթարվող  $D=250$ մ պողպատե խողովակի  $L=10$ մ հատվածը  $D=225$ մ ՊԷ խողովակով: Արդյունքում տնտեսվել է  $Q=1$ լ/վ ջրաքանակ:





**Վարսեր գյուղում** կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար 1-ին փողոց 58 տան մոտով անցնող, D=110մմ ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q= 5լ/վ ջրաքանակ:



**Հրազդան քաղաքում** իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Երևան-Սևան մայրուղու վրա հայտնաբերվել է Q=1,2լ/վ քանակությամբ վթար, իսկ Զորավար Անդրանիկ փողոցի վրա 1 անհայտ միացում:



**Մարտունի քաղաք** կատարված ուսումնասիրությունների արդյունքում Մոմյան փողոցում հայտնաբերվել է վթար 160մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=2,5 լ/վ ջրաքանակ:



**Գառնի-Երևան** ջրատարի վրա իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար եզրիների գերեզմանատնից դեպի ձոր իջնող (D=1000մմ) հատվածում: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 3լ/վ ջրաքանակ:


**Քաղաք Երևան** Հյուսիս տեղամասի հետ համատեղ կատարված աշխատանքների արդյունքում փոխարինվել է Նոր Նորք 2-րդ գանգվածի Դավիթ Մալյան 8 շենքի հարևանությամբ D = 150մմ վթարված, ավտոտնակների տակով անցնող ջրագծի, որի փոխարեն կառուցվել է նոր D=160մմ, L=70մ ՊԷ ջրագիծ: Նոր ջրագծի միացման աշխատանքների ընթացքում ծածկույթի տակ հայտնաբերվել է դիտահոր, որում առկա էին անհասկանալի ինժեներական լուծումներով հանգույցներ, որը վերածվել է ավելի պարզ հանգույցի: Խցափակվել է նաև վաղեմի վթարված D=150մմ, L=80մ ջրագիծ՝ ջեռուցման անցուղիների տակ: Ընդհանուր տնտեսվել է Q = 5լ/վ ջրաքանակ:



Հյուսիս տեղամասի աշխատակիցների հետ կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մոլորվական 37/35 հասցեում գտնվող դեպի Նորք Մարաշ գնացող D=500մմ տրամագծով պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 3լ/վ ջրաքանակ:

Կենտրոն տեղամասի հետ համատեղ կատարած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Տիգրան Մեծ 29 շենքի մոտ գտնվող D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q= 4լ/վ ջրաքանակ:





Նորը Մարաշի Գարեգին Հովսեփյան փողոցում, «Կենտրոն» տեղամասի հետ համատեղ իրականացրած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է հին գաղտնի վթար նշված փողոցով անցնող ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 7$ լ/վ ջրաքանակ:

Դավթաշեն 2-րդ թաղամասի հոսքաչափի արձանագրած տվյալների արդյունքում(7.12.2021) պարզվել է, որ նշված գոտում առաջացել է վթար մոտ  $Q = 20$ լ/վ ջրաքանակով:

Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Դավթաշեն 2-րդ թաղամաս 21 շենքի մոտ գտնվող  $D=200$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո ջրամատակարարումը վերականգնվել է:



Մաշտոց տեղամասի Պռոշյան գյուղում իրականացրած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Ա. Բսահակյան փողոցով անցնող  $D=100$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q=8$ լ/վ ջրաքանակ:

«Շահումյան» տեղամասի հետ համատեղ իրականացրած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և խցափակվել է Բսակով 32 շենքի մոտ վթարված  $D = 100$ մմ ջրագիծը, որն անցնում էր ավտոտնակների տակով: Կառուցվել է նոր ջրագիծ՝ շրջանցելով մասնավոր տարածքները: Արդյունքում տնտեսվել է  $Q = 9.5$ լ/վ ջրաքանակ:

### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Լոռի ՋՄԿ-ում ռեագենտ տնտեսությունը համալրվել է մշակվող ջրի կոագուլավորման համար անհրաժեշտ լրացուցիչ ծծմբաթթվական ալյումինի և կրի լուծույթներ պատրաստող սարքավորումներով՝ ջրարտադրության քանակի ավելացման և ջրի որակի բարելավման նպատակով:



Կախված նստվածքով պարզարանների և արագ գործողության ֆիլտրերի սրահի փայտե փտած հարթակները փոխարինվել են նորերով՝ Լոռի ՋՄԿ-ում աշխատակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով:




Քաղաք Մեղրիի «Ագարակ» ՋՄԿ-ում քլորակայանի բետոնե քայքայված հատակն ամբողջությամբ կարգաբերվել է ցեմենտ ավազե հարթեցնող շերտով, որն արդեն թույլ է տալիս հեղուկ քլորի կոնտեյներով բարձրված սայլակն առանց խոչընդոտների տեղակայել համապատասխան վայրում:




Չմռան ամիսներին՝ գրեթե ամեն օր, գիշեր թե ցերեկ, իրականացվում են սառույցների կոտրման աշխատանքներ:

Քաղաք Իջևանի Ազատամուտ ք/կ-ում իրականացվել է հիպոքլորիդի հաբի սարքավորման ցնցուղի փոխարինում՝ հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



Քաղաք Վարդենիս Ակներ ք/կ-ում իրականացվել է հեղուկ քլորի համակարգի 0.5 կգ դոզատորի վերանորոգում՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

Քաղաք Արուվյանի Ակունք քլորակայանում իրականացվել է հիպոքլորիդի հաբի համակարգի խափանված ցիրկուլացիոն պոմպի փոխարինում, որը կապահովի հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը:




Քաղաք Երևանի Արգնի քլորակայանում իրականացվել է հեղուկ քլորի համակարգի խափանված Alldos փականի փոխարինում նորով, որը նույնպես կապահովի հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

Քաղաք Գավառի Գանձակ քլորակայանում իրականացվել է հիպոքլորիդի հաբի համակարգի խափանված ցիրկուլացիոն պոմպի փոխարինում՝ հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



Քաղաք Իջևանի Գետափնյա քլորակայանում իրականացվել է հիպոքլորիդի հաբի սարքավորման խցանված մասերի կարգաբերում՝ անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




Քաղաք Ապարանի Եզնակ քլորակայանում փոխարինվել է վակուում կարգավորիչի հենակը՝ սարքավորման անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով:

Գանձակ քլորակայանում փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի ջրի մղման պոմպը՝ սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու համար:



Քաղաք Գյումրի Կապա քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նոր վերանորոգված վակուում կարգավորիչով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




Քաղաք Երևան Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում որպես պահեստային սարքավորում վերանորոգվել է վակուում կարգավորիչ:

### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 36097 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 1094 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8951 զանգ՝ 80,7%, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2143 զանգ (19,3%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 25003 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 17918 զանգ (71,7%), իսկ մարզերինը՝ 7085 զանգ (28,3%):

#### 185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր



	Ստորաբաժանում	2020 դեկտեմբեր	2021 դեկտեմբեր	
<b>Առևտրային</b>	Ընդամենը	11999	11094	-7.54%
	Երևան	9555	8951	-6.32%
	Մարզեր	2444	2143	-12.32%
<b>Շահագործում</b>	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	26500	25003	-5.65%
	Հարավ	10674	9407	-11.87%
	Շենգավիթ	1903	1815	-4.62%
	Կենտրոն	2747	1898	-30.91%
	Հյուսիս(Ավան, Նոր նորք)	2326	1754	-24.59%
	Էրեբունի	1293	1200	-7.19%
	Պոնպեր	523	518	-0.96%
	Մարզեր	1882	2222	18.07%
	Հյուսիս	15826	15596	-1.45%
	Արարկիթ	3230	3737	15.70%
	Քանաքեռ Ջելթոն	2530	1993	-21.23%
	Մաշտոց	3019	2264	-25.01%
	Շահումյան	1960	1782	-9.08%
	Պոնպեր	1077	957	-11.14%
	Մարզեր	4010	4863	21.27%
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	38499	36097	-6.24%	

● 2020թ. դեկտեմբեր ամսվա համեմատ՝ 2021թ. դեկտեմբեր ամսին 7,54 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 5,65 %-ով:

● 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 2021թ. դեկտեմբեր ամսին 44%-ով ավելացել է հայտարարությունների լսումը, 15%-ով՝ ֆիքսված զանգերի քանակը և 6%-ով՝ 5 բոպեից ավել զանգերի քանակը:

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Դեկտեմբերը տարվա վերջին ամիսն էր, դրա համար Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ կողմից փորձ արվեց հնարավորինս ամփոփել այս ընթացքում կատարված աշխատանքները մի կողմից հրապարակումները հետաքրքիր դարձնելու համար, մյուս կողմից ՎեոլիաԹիմի ջանքերն ու ներդրումը ցույց տալու:



Ուշաուրաթուն  
 «Վեոլիա Ցուր» ընկերությունը տեղեկացնում է իր համախորհուրդին և սպառողներին, որ վաղապես աշխատանքներով պայմանավորված, ս.թ. դեկտեմբերի 18-ին ժամը 16:00-ից մինչև դեկտեմբերի 19-ը ժամը 16:00-ն կրպարտեցի Երևանի Արաբկիր վարչական շրջանի հետևյալ տարածքների ջրամատակարարումը  
 - Կոմիտաս, Արյուճ, Դանիսեցյան, Մամուկյանց, Արուստյան, Գոհրեղյան, Կոստյան, Կոստյան 2-րդ և 4-րդ կղզակցներ...  
**Տեսնել ավելին**



«Վեոլիա Ցուր» ՓԲԸ գործունեության մասին է Կենտրոն հեռուստաալիքի ռեպորտաժը  
 Ջայաստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգի հիմնադրման 110 ամյակի առթիվ

տեղադրվեց նաև face-առիթից, ինչպես միշտ, ՀԿԲ-ն ընթերցողին ներկայացրեց նաև որոշ լրացուցիչ թեմատիկ տեղեկատվություն Վեոլիա Ջրի մասին, մասնավորապես անցած տարիներին համակարգը ավտոտրանսպորտային միջոցներով հագեցնելուն ուղղված ջանքերի ու ծախսված միջոցների մասին:

Դեկտեմբերին ընդհանուր առմամբ իրականացվել է ավելի քան երեք տասնյակ աշխատանքների լուսաբանում: Այնուամենայնիվ, գլխավորը ՀԿԲ-ի համար ոչ այնքան հրապարակումների քանակն է եղել, որքան սպառողների հետ կապի շարունակականությունը, Վեոլիայի գործունեության վերաբերյալ տեղեկատվության պահանջարկը բավարարելը և ապացուցելը, որ ՎեոլիաԹիմի գործունեության հիմքում հանրային շահն է: Դրա համար ընդհանուր առմամբ ապահովվել է օրական միջինը 2 հրապարակում, տեղեկատվությունն էլ եղել է բազմազան, ստացված համակարգի տարբեր ծառայություններից, ընդգրկել է հնարավորինս լայն աշխարհագրություն և մատուցվել է տարբեր արտահայտչական միջոցներով գրավչության համար:

Այսպես, հանրության շրջանում մեծ արձագանք ստացած խոշոր ջրատարի վթարի մասին Ադոնցի փողոցում, մասնավորապես, ոչ միայն հաղորդվել է անմիջապես, այլև ուղեկցվել է լուսանկարով՝ վթարի վայրից, Գառնի-Երևան մայրուղային ջրատարի վթարի վերաբերյալ ապահովվել է 2 օպերատիվ հրապարակում՝ տեսանյութով ու լուսանկարաշարով, ցույց տալու համար խնդրի բարդությունն ու ՎեոլիաԹիմի ջանքերը, իսկ Գավառում «Ավզնոց-Միդե» ՕԿՁ-ի ջրագծի օդահեռ փականի վթարը ներկայացվել է շատրվանող ջրի տեսանյութով:

Զմեռային ցուրտ եղանակն ու ձյան առկայությունը ՀԿԲ-ն նույնպես օգտագործել է ջրմուղագործների աշխատանքը ցայտուն ներկայացնելու համար: Ցուրտ Ջերմուկում ջրագծի վթարի վերացնելը՝ 4 մետր խորության տակ, ինչպես նաև Վանաձորի «Ղաղրիձոր» և «Մալիտակ ջուր» ՋՄԿ-ների բարձրադիր սարքերում գտնվող գետային ջրընդունիչները սառցակալումից ազատելը դրա օրինակն է:

Հանրային կապերի բաժինը հնարավորինս լիարժեք օգտագործել է նաև ընձեռված հնարավորությունները Վեոլիայի հեղինակությունը հանրության շրջանում բարձրացնելու, ինչպես նաև մեր աշխատակիցներին խթանելու, նոր առաջընթացի մղելու համար:

Այսպես, դեկտեմբերի 23-ին, Կաթնաղբյուր – Երևան ջրատարի շահագործման, հետևաբար Հայաստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգի հիմնադրման 110 ամյակի առթիվ, որը ավանդաբար նշվում է որպես ջրմուղագործի ոչ պաշտոնական օր, facebook.com/veolia.armenia-ի էջում հրապարակվել է ու հանրության շրջանում զգալի արձագանք է ստացել ընկերության գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի ուղերձը համակարգի աշխատակիցներին: Նույն օրը տվյալ իրադարձությունը լուսաբանել է Կենտրոն հեռուստաալիքը, որի աշխատակիցների հետ ՀԿԲ-ն այս նպատակով շրջայց է կազմակերպել համակարգի մի շարք կառույցներում, ինչպես նաև շինհրապարակներում:

Դրա օրինակ է Արագածոտնի մարզի «Ղազարավան» ջրաղբյուրից սկիզբ առնող 500 մմ տրամագծով խողովակաշարի հերթական՝ 700 մետրանոց վթարված հատվածի փոխարինումը, որի արդյունքում բարելավվեց Աշտարակի և Էջմիածնի տարածաշրջանի մի շարք բնակավայրերի ջրամատակարարումը: Հաջորդ փաստը Վայոց Ձորի մարզի Գլաձոր գյուղում և Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում ու Ներքին Գետաշեն գյուղում շահագործման հանձնված նոր ջրագծերն են՝ շուրջօրյա ջրամատակարարմամբ: Ներկայացվել է Կարգավարական բաժնի աշխատանքը տարեվերջին: Գրվել է նաև հոկտեմբեր-նոյեմբերին Էրեբունի թաղամասում շահագործումից հանված 800 գծամետր վթարված թուջե և 2300 գծամետր պողպատե խողովակաշարի մասին ջրի զգալի տնտեսմամբ: Ի վերջո, Գորիսի գլխավոր բաժանարար հանգույցի վերակառուցման ավարտը, որի շնորհիվ քաղաքի մեծ մասում կարգավորվեց ջրամատակարարումը: Մակայն այս շարքի հրապարակումներից ամենացայտունը 6-ամսյա աշխատանքից հետո ընկերության կենտրոնական ավտոհավաքակայանի վերաշահագործումն է՝ Ջրային կոմիտեից ու ՀՀ ՀՕԿՀ-ից հյուրերի մասնակցությամբ, որը լուսաբանվեց Կենտրոն հեռուստաալիքով: Այդ մասին տեղեկատվությունը՝ լուսանկարաշարով book.com/veolia.armenia էջում: Օգտվելով



Ջայաստանի կենտրոնացված ջրամատակարարման համակարգը 110 տարեկան է  
 Վրոնջի գործընկերներ  
 Ըարեկամներ... Տեսնել ավելին

#Վեոլիա Տուր ընկերության Կարգավորական ծառայությունն աշխատում է ձմեռային ռեժիմով

Քանակարգի ջրի պահանջն այս օրերին նազելում է վայրկյանում շուրջ 15500 լիտր՝ ամառային շրջ օրերի 20000-ի փոխարեն: Դրանով կայանապիտակած՝ նրաբառայան ու Շոբ-շոբի #արդյունքները ևորից վերանվել են պահուստային: Տուրը սպառողին է հասնում հիմնականում լեռնային արջուրներից՝ ինքնախո եղանակով:

Պունակայանների շահագործումը կա բավական չէ:

- ❌ Փանրի ջրաբյուրում 4 պոմպի փոխարեն աշխատում է 1-ը:
- ❌ Ապարանում՝ 13-ից 4-ը:
- ❌ Կաթնաբյուրում՝ պոմպերի միայն կեսը:

Անուամենայնիվ #կարգավորներն ու #օպերատորները շուրջօրյա ռեժիմով հեռակառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով շարունակում են հետևել:

- ✅ 133 արջուրներում ջրի արտադրությանը:
- ✅ 53 պունակայանների աշխատանքին:
- ✅ 93 կայանների ջրոսպանն գործընթացին:
- ✅ 8 կայանների ջրի մաքրմանը:
- ✅ 365 օրվա կառավարիչ ցրամեսարների ցվածությանն ու մրա բոլոր ցուցանիշներին: Դրոնցից կախված են 604 000 բաժանորդին մատակարարվող ջրի որակն ու ժամանակացույցը:

#ՎեոլիաՏուր #ՄեխափանՏրամախոսակարարում #ՁմեռայինՌեժիմ



Իսկ Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ֆեյսբուքյան էջի հաղորդագրության վերահրապարակումը [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia) էջում ՀԷՑ ՓԲԸ-ի հետ համատեղ շենքերից մեկում առկա խնդրի լուծման մասին, կոչված էր ցույց տալու մեր համագործակցության շրջանակներն ու պատրաստակամությունը՝ սպառողներին հուզող խնդիրների լուծման գործում:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում: Veolia.am պաշտոնական կայքում, [twitter.com/Veolia\\_AM](https://twitter.com/Veolia_AM) և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/VeoliaJur) էջերում:

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



## 5.1. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանումներից ՈԱԱ բաժնին են ներկայացվել կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտահանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

## 5.2. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 28/09/2005թ. 2388-Ն որոշմամբ հաստատված «Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգի» պահանջներով, «Պրեմիում գազ» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող թվով 18 աշխատակցի համար հեղուկ և սեղմված բնական գազով շահագործվող մեքենաների վարորդների հրահանգավորում և վկայականների տրամադրում:


● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 23/11/2006թ. N 1933-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրականայինների շահագործման անվտանգության կանոնների» տեխնիկական կանոնակարգի և «ՀՍՏ 312-2009\_Կազմակերպությունների էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմերին էլեկտրաանվտանգության որակավորման խմբեր շնորհելու պայմաններ» ստանդարտի պահանջներով, կազմակերպեց «Էներգետիկայի գիտահետազոտական ՓԲԸ» հավատարմագրված փորձագետների կողմից Ընկերության Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող պատասխանատու անձի որակավորման դասընթաց թվով 2 աշխատակցի համար:

● Միաժամանակ, ղեկավարվելով վերը նշված կանոնակարգով և պահանջներով և Հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից հաստատված «Ընկերության Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի ուսուցման և որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Էլեկտրականություն» ԲՈՒԿ ստանդարտի պահանջները, Բաժինը, հրավիրված դասընթացավարի հետ համատեղ, կազմակերպեց և իրականացրեց

▶ «Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի որակավորման» դասընթացը՝ Ընկերության թվով 24 աշխատողի համար


▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացը՝ Ընկերության թվով 28 աշխատողի համար

▶ և «Էլեկտրականություն» Բարձր ոլիսկերի կառավարման ստանդարտ դասընթացը՝ Ընկերության թվով 28 աշխատողի:



Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:

**2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ**



**5.3. ԲՈՒԺՉՆՆՈՒՄ**

● Ընկերությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15/07/2004թ. N1089-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հաշվետու ամսում պայմանագրային հիմունքներով «Երևանի թիվ 1 պոլիկլինիկա», «Մաստեր Ֆարմ», «Սևանի ԲԿ», «Մեդրու տարածաշրջանային ԲԿ», «Եղեգնաձորի ԲԿ» և «Կապանի ԲԿ» բուժհաստատությունների հետ համատեղ կազմակերպեց Ընկերության արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի ժամանակահատվածում վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող թվով 147 աշխատողի համար բժշկական գնումներ (թերապևտի, նյարդաբանի, ակնաբույժի օտոլարինգոլոգի մաշկաբանի մոտ) և հետազոտություններ (ֆյուրոնկարահնում):


**5.4. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ**

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 20 քլորակայանում, 3 պոմպակայանում, 5 ՋՄԿ-ում և 15 վարչական շենքում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:



2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.5. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բաժինը, «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձագետների հետ համատեղ, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացրել է թվով 44 ԱՎՕ-ի (քլորակայան, ամբարձիչ սարքավորում, մանիպուլյատոր հարմարանքով կահավորված ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:
- Բաժինը, ելնելով համակարգերում տեխնաձին վթարների կանխարգելմանն և բացառմանն, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում իրականացրել է թվով 1 քլորակայանի և 5 ամբարձիչի տեխնիկական անվտանգության վկայագրի Հավատարմագրված մարմին հանդիսացող «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձագետների կողմից փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների ստացման աշխատանքները:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## 6.1 ԻՆՏԵՐՎԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ

Դեկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- SS վարչության աշխատակիցների ամբողջ խմբով անցկացվել են ամենօրյա խմբային քննարկումներ:
- Գրուպի կողմից անցկացվել է կիրեռ անվտանգության աուդիտ:
- Անցկացվել է կիրեռ անվտանգության արդյունաբերական ոլորտի աուդիտ, քանի որ Հայաստանը ներառվել է «Top 25» կրիտիկական կիրեռ անվտանգության արդյունաբերական ոլորտների ցանկում: Արդյունքում՝ Գրուպը որոշել է ներդրումներ կատարել տվյալ ոլորտում՝ նվազեցնելով կիրեռանվտանգության ռիսկերը:
- Մեկնարկել է «Zabbix» SS մոնիտորինգային կենտրոնի գործունեությունը: Որի արդյունքում հայտնաբերվել են SS ոլորտին առնչվող խնդիրներ, որոնց տրվել է շուտափույթ լուծում:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում են, ուստի ստորև ներկայացվում է դեկտեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Իսխատման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Յրուսիս	3	0.6	0.1
Էրեբունի	18	9.6	1.7
Շենգավիթ	8	2.9	0.5
Կենտրոն	6	3.2	0.6
Արաբկիր	9	2.9	0.5
Մաշտոց	14	6.4	1.0
Շահումյան	23	9.8	1.5
Քանաքեռ-Զեյթուն	39	18.2	2.9
ԱՎԲ	92	37.1	6.1
Լոռի	10	12.0	1.9
Շիրակ	17	9.6	1.5
Արթիկ	7	1.8	0.3
Արարատ	10	1.3	0.2
Աբովյան	50	29.1	4.5
Յրագղան	5	2.1	0.3
Ալավերդի	12	3.2	0.6
Արտաշատ	10	1.3	0.2
Բերդ	2	0.2	0.0
Գավառ	2	0.6	0.1
Գորիս	2	1.0	0.2
Դիլիջան	3	1.3	0.2
Եղեգնաձոր	2	0.8	0.1
Էջմիածին	2	0.4	0.1
Իջևան	12	0.9	0.2
Կապան	2	0.8	0.1
Մասիս	3	0.7	0.1
Մարտունի	1	0.3	0.0
Մեղրի	1	0.3	0.0
Նոյեմբերյան	1	0.5	0.1
Աշտարակ	39	18.3	2.8
Զարենցավան	2	1.2	0.2
Սիսիան	10	8.5	1.5
Սպիտակ	1	0.1	0.0
Ստեփանավան	3	1.5	0.2
<b>Ընդամենը</b>	<b>421</b>	<b>188.6</b>	<b>30.6</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)՝ Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է դեկտեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յրուսիս	17	4.85	27	0.18
Էրեբունի	7	4.15	41	2.62
Շենգավիթ	21	7.43	122	1.08
Կենտրոն	16	13.79	60	5.69
Արաբկիր	2	0.77	7	0.08
Մաշտոց	19	5.19	80	0.41
Շահումյան	27	6.38	87	5.65
Եղվարդ	1	0.52	1	0.00
Քանաքեռ-Զեյթուն	19	4.55	183	2.00
Լոռի	9	1.47	50	0.69
Շիրակ	25	6.69	66	0.41
Արթիկ	12	4.90	36	0.12
Արարատ	5	0.73	29	0.15
Աբովյան	23	11.73	54	0.56
Յրագղան	9	2.31	21	0.08
Ալավերդի	-	-	6	0.03
Աշոցք	2	0.77	2	0.01
Արտաշատ	2	0.37	12	0.10
Բերդ	5	0.71	11	0.05
Գավառ	5	2.09	16	0.22
Գորիս	5	2.32	17	0.06
Դիլիջան	3	1.44	9	0.05
Եղեգնաձոր	2	0.77	7	0.10
Էջմիածին	9	2.37	20	0.17
Իջևան	2	0.17	5	0.04
Կապան	-	-	5	1.21
Մասիս	14	5.75	38	0.47
Մարտունի	-	-	2	0.01
Մեղրի	2	0.77	1	0.00
Նոյեմբերյան	-	-	3	0.02
Արմավիր	7	2.27	26	0.21
Ջերմուկ	-	-	1	0.01
Սևան	-	-	5	0.02
Աշտարակ	1	0.17	4	0.02
Զարենցավան	11	4.30	18	0.13
Սիսիան	-	-	9	0.05
Սպիտակ	6	0.89	20	0.07
Ստեփանավան	11	5.52	9	0.03
Տաշիր	-	-	8	0.05
<b>Ընդամենը</b>	<b>299</b>	<b>106.15</b>	<b>1118</b>	<b>22.88</b>





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am